

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐՎԵՍՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱՃԱՌՅԱՆ ԱՆԻ ՀՐԱՉՅԱՅԻ

ԵՐԵՎԱՆԻ ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԻ ԻՆՏԵՐԻԵՐԻ ԴԻԶԱՅՆԸ

ժԷ.00.03 - «Կերպարվեստ, դեկորատիվ և կիրառական արվեստ,
դիզայն» մասնագիտությամբ
արվեստագիտության թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՍԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 2017

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ИНСТИТУТ ИСКУССТВ

ԱՇԱՐԿԱՆԻ ՐԱՇԵՎՆԱ

ДИЗАЙН ИНТЕРЬЕРА МУЗЕЕВ ЕРЕВАНА

АВТОРЕФЕРАТ

диссертации на соискание ученой степени
кандидата искусствоведения по специальности
17.00.03 – “Изобразительное искусство, декоративное и
прикладное искусство, дизайн”

ԵՐԵՎԱՆ – 2017

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայում:

Գիտական ղեկավար՝ ճարտարապետության դոկտոր, պրոֆեսոր
Քերթմենջյան Դավիթ Գրիգորի

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր
Հակոբյան Հրավարդ Հրաչյաի
արվեստագիտության թեկնածու
Հարությունյան Մարտին Վարդանի

Առաջատար կազմակերպություն՝ Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2017թ. հունիսի 15-ին, ժամը 14.00-ին, ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտում գործող ՀՀ ԲՈՅ-ի 016 Արվեստագիտության մասնագիտական խորհրդի նիստում (հասցեն՝ 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2017 թ. մայիսի 15-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր՝

Ասատրյան Ա. Գ.

Тема диссертации утверждена в Ереванской художественной государственной академии.

Научный руководитель - доктор архитектуры, профессор
Кертменджян Давид Григорьевич

Официальные оппоненты - доктор искусствоведения, профессор
Акопян Гравард Грачьяевич
кандидат искусствоведения
Арутюнян Мартин Варданович

Ведущая организация - Армянский государственный педагогический университет им. Х.Абовяна

Защита диссертации состоится 15-го июня 2017г. в 14.00 часов на заседании специализированного совета 016 Искусствоведение ВАК РА, действующего в Институте искусств НАН РА (адрес: 0019, Ереван, проспект Маршала Баграмяна 24/4).

С диссертацией можно ознакомиться в библиотеке Института искусств НАН РА.

Автореферат разослан 15-го мая 2017г.

Ученый секретарь специализированного совета,
доктор искусствоведения, профессор

Асатрян А. Г.

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության թեման: Թանգարանային ինտերիերի դիզայնը միջավայրի ներդաշնակ, ազդեցիկ և ֆունկցիոնալ գեղարվեստական հորինվածքի նախագծումն է: Այն համակարգային կերպով ամփոփում է թանգարանային միջավայրի գոտևորման, լուսավորության, գունային համադրությունների, կահավորման, տեսողական հաղորդակցության, ցուցանմուշների անվտանգ պահպանման և ներկայացման գործառույթները: Թանգարանային ինտերիերի դիզայնը բավականին բարդ և համակարգված գործընթաց է, որը մեծ կարևորություն ունի համաշխարհային պրակտիկայում: Թանգարանները կարևորագույն նշանակություն ունեն երկրի մշակութային, կրթական, հասարակական և քաղաքական բնագավառներում, ուստի ցուցանմուշների գրագետ մատուցումը, պահպանումը և անվտանգությունը առաջնային դեր ունեն: Հայաստանը, տարածաշրջանում հանդիսանալով մշակութային խոշոր կենտրոն, հարուստ է իր հնամենի գոյությունն ու զարգացող ներկան ապացուցող խոշոր ներկայանալի նյութով, որը զետեղված է բազմաբնույթ և բազմապրոֆիլ թանգարաններում: Թանգարաններ կան Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում, որոնց մեծ մասը կենտրոնացած է մայրաքաղաքում: Թանգարանային ինտերիերի դիզայնի միտումները օրեցօր զարգանում են Երևանում, սակայն դրանք ըստ ցուցանմուշների բնույթի և պրոֆիլային առանձնահատկությունների ունեն ուսումնասիրության և վերանայման կարիք:

Ատենախոսության առարկան: Ուսումնասիրությունը մասնագիտորեն ներգրավում է թանգարանային ինտերիերի դիզայնի զարգացման վերլուծությունը, մեթոդիկան, տեսակներն ու տիպերը, ոճային և պրոֆիլային առանձնահատկությունները, ինչպես նաև ձևավորման հորինվածքային տեսությունը, նախագծային սկզբունքները, հայկական իրականության հետ թեմայի առնչությունները:

Ատենախոսության ժամանակագրական և աշխարհագրական սահմանները: Ատենախոսության ժամանակագրական և աշխարհագրական սահմանների ուսումնասիրման գործում, որպես առավել կարևոր նախադրյալներ, հետազոտվել են Երևանում խորհրդային և հետխորհրդային ժամանակաշրջանում հիմնադրված թանգարանները, ներկայացվել են վերջին տարիներին արդիականացված թանգարանների լավագույն օրինակները: Պատմական զարգացման խնդիրների կապակցությամբ ատենախոսությունում անդրադարձ է կատարվել թանգարանների նախատիպերին, ինչպես նաև զուգահեռներ են անցկացվել միջազգային արդի օրինակների հետ:

Ատենախոսության արդիականությունը: Հանդիսանալով մշակութային, տեղեկատվական ու պատմահնագիտական խոշոր կենտրոններ՝ թանգարաններն իրենցից ներկայացնում են խոշոր արժեք: Յուրաքանչյուր թանգարանի կարևորագույն խնդիրներից է մշակութային արժեքների պահպանումը և դրանց ներկայացումը կրթական, ճանաչողական և գիտական տեսանկյուններից, ուստի ցուցանմուշների գրագետ մատուցումը, պահպանումը և անվտանգությունը առաջնային դեր ունեն: Ներկայիս Երևանյան թանգարանների ինտերիերի դիզայնի սակավաթիվ հաջողված օրինակների կողքին՝ նկատելի են բազմաթիվ արդիականացման կարիք ունեցող օրինակներ, որտեղ պահպանվում և ներկայացվում են մշակութային հսկայական արժեք ունեցող նմուշներ: Ուստի անհետաձգելի է դրանց մասնագիտական փաստագրումն ու վերանայումը: Այդ առումով աշխատության մեջ ներկայացվում են թանգարանների դիզայններական հիմնախնդիրները և դրանց բարելավման հնարավորությունները, որոնք կատարվում են տիպաբանական, հորինվածքային և տեխնոլոգիական մոտեցումներով:

Ատենախոսության մեջ քննարկվող միջազգային զուգահեռները, դրանցում առկա ինտերակտիվ սարքավորումների, կոմպոզիցիոն մտահղացման, նորանոր նյութերի համադրման, լուսավորության, կահավորման, տեսողական հաղորդակցության և այլ միտումներ թույլ են տալիս օբյեկտիվորեն գնահատել Երևանի թանգարանների ինտերիերի դիզայնը՝ հող նախապատրաստելով դրանց արդիականացման համար:

Այսօր Երևանի թանգարանների ինտերիերի դիզայնի միջազգային զուգահեռներով վերլուծությունը անհետաձգելի անհրաժեշտություն է, որն օժանդակում է մասնագիտական գործունեության ոլորտների հարստացմանը և միջոցների ամբողջացմանը: Փաստն այն է, որ ներկայումս համաշխարհային մեծ նշանակություն ունեցող թանգարաններում չափազանց շատ է կարևորվում ինտերիերի դիզայնի գեոագիտական կազմակերպումը: Դրա վկայությունն է Միավորված ազգերի կոթողի, գիտության և մշակութային կազմակերպությանը՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ին կից թանգարանների միջազգային կոորդինացիայի Հայաստանի ազգային կոմիտեի (ICOM) կողմից վեոցին տարիներին կատարված թանգարանների ինտերիերի դիզայնի վերաբերյալ բազում հրատարակումներն ու դասախոսությունները: Ուստի Երևանի թանգարանների ինտերիերի դիզայնի արդիականացումը առդեն կարելի է դիտարկել, որպես համաշխարհային կարևորության հարցադրում: Հարկ է նշել նաև, որ տարեցտարի Հայաստանի Հանրապետությունում զարգանում է զբոսաշրջությունը, որի խթանիչներից մեկը այցելությունն է հյուրընկալ թանգարաններ: Այդպիսով, ժամանակին համընթաց, դրանց գեոագիտական միտումները զարգացնելու հեռանկարները գտնելու համար անհրաժեշտ է կատարել թանգարանների ինտերիերի դիզայնի արդիականացման փաստագրում, վերլուծություն և հետազոտություն:

Ատենախոսության նպատակը: Ատենախոսությունը նպատակաուղղված է Երևան քաղաքի թանգարանների ինտերիերի դիզայնի քննական ուսումնասիրությանը: Հետազոտության հիմնահարցը Երևանի թանգարանների դիզայնի արդիականացման լուծումների ու առանձնահատկությունների համակողմանի բնութագրումն է, որը կարող է ծառայել նաև որպես դիդակտիկ նյութ հետագա մասնագիտական գործընթացների համար:

Ատենախոսության գիտական խնդիրները: Բնականաբար նման ուսումնասիրությունը մասնագիտական միջազգային իրականությունից և անցած ուղուց ունի իր ելակետերը, որոնցից և ածանցվում են Երևանի թանգարանների ինտերիերի դիզայնի իրականության բնութագրման չափորոշիչները: Որպես այդպիսին ատենախոսությունում գիտական խնդիրներ են սահմանում հետևյալ կետերը.

1. միջազգային իրականությունում թանգարանների ինտերիերի դիզայնի զարգացման նախադրյալների ուսումնասիրումն ու տարածումը Հայաստանի Հանրապետությունում,
2. թանգարանային ինտերիերի դիզայնի կազմակերպման փուլերի ուսումնասիրությունն ու բնութագրումը,
3. Երևանի թանգարանների ցուցակագրումը ըստ պրոֆիլների,
4. պրոֆիլային առանձնահատկությունների քննական ուսումնասիրությունը. ներառյալ՝ ինտերիերի գունային հարաբերության, ցուցադրական տարրերի համամասնության հիմնախնդիրները, միջավայրի՝ կերպարային և մթնոլորտի կազմակերպումը, տարաբնույթ նյութերի հորինվածքային համադրումը, տեսողական հաղորդակցությունը, բնական և արհեստական լուսավորությունը և այլն,
5. Երևանի թանգարանների փաստագրական-վերլուծական ուսումնասիրությունը,

6. միջազգային և երևանյան թանգարանների ինտերիերի դիզայնի բնութագրիչ առանձնահատկությունների համեմատական ուսումնասիրությունը,
7. Երևանի թանգարանների ինտերիերի դիզայնի հիմնական ոճերի ուսումնասիրությունը: Ատենախոսության մեթոդը հիմնվում է պատմական ու տեսական գիտելիքների, միջազգային առաջատար փորձի բնութագրի վրա, որը զուգահեռաբար համեմատության մեջ է դրվում Երևանի թանգարանների ինտերիերի դիզայնի փաստագրավերլուծական տվյալների հետ: Հետևաբար հետազոտությունը որակական մեթոդով է իրականացված:

Ատենախոսության գիտական նորույթը: Մինչ օրս չկա որևէ ծավալուն կամ համառոտ ուսումնասիրություն Երևանի թանգարանների ինտերիերի դիզայնի և նրա մասնագիտական ճյուղերի ուսումնառության պրակտիկայի առնչությամբ: Թանգարանների ինտերիերի դիզայնը, որպես ատենախոսության ուսումնասիրության առարկա հանդես գալով առաջին անգամ, իր մեջ ներառում է.

- Երևանում գործող թանգարանների ըստ պրոֆիլների փաստագրումը,
- միջավայրային և նախագծային առանձնահատկությունների, լուսավորության, գոտևորման, հորինվածքի, տեսողական հաղորդակցության, կահավորման վերլուծությունը,
- թանգարանների համեմատական վերլուծությունը միջազգային նույնապրոֆիլ թանգարանների լավագույն օրինակների հետ,
- Երևանի թանգարանների ինտերիերի դիզայնի տիպաբանական, ոճային հորինվածքային և տեխնոլոգիական վերլուծությունը,
- թանգարանների ինտերիերի դիզայնի արդիականացման հնարավորությունների առաջարկներ:

Ատենախոսության գործնական նշանակությունը: Ատենախոսության արդյունքները կարող են օգտագործվել գործնական նախագծման, ինչպես նաև տեսական ու մեթոդական ուսումնասիրությունների համար: Ատենախոսության դրույթները հրապարակվել են ՀՀ մասնագիտական մամուլում հոդվածների ձևով: Աշխատության հիմնական դրույթների մասին հրապարակումներ են կատարվել ՀՀԳԱԱ Արվեստի ինստիտուտի երիտասարդ հայ արվեստաբանների գիտական նստաշրջաններում, Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայի հետազոտական կենտրոնի և գիտական մասի կողմից կազմակերպված հանդիպումներում:

Ատենախոսության գրականության տեսությունը: Աշխատության գիտական գրականության տեսության մի մասը կազմում են Հայաստանի Հանրապետությունում դիզայնի բնագավառին առնչվող սակավաթիվ հրատարակությունները: Անհրաժեշտ է նշել, որ եղած հրատարակությունների մեծամասնությունը մասնագիտական մեթոդական բնույթ չեն կրում և կարիք ունեն քննական ընդհանրացման: Բացի այդ ՀՀ պրակտիկայում դեռևս չկա թանգարանային ինտերիերի դիզայնին նվիրված որևէ նշանակալի գիտական հրատարակություն: Գոյություն ունեցող հրապարակումները ընդգրկում են ընդհանուր դիզայնի մասնագիտությամբ պաշտպանված մի քանի ատենախոսություններ, մնացյալն առնչվում է թանգարանագիտական բնագավառին: Գիտական գրականության մյուս մասը կազմում են տեսության պատմության, ժամանակակից դիզայնի արվեստաբանության և պրակտիկային նվիրված գործերը: Ատենախոսության տեսական խնդիրների համար ներգրավվել են տուրիստական, թանգարանագիտական, ճարտարապետական և դիզայներական հրատարակություններ: Քանի որ դիզայնի վերաբերյալ հայկական աշխատությունները սակավ են, սույն ատենախոսությունում օգտագործվել են

միջազգային հրապարակումներ, որոնք տպագրված և համացանցի օրինակներով ներգրավված են ատենախոսության բովանդակության մեջ:

Ատենախոսության շարադրման գործընթացում օգտագործվել են թանգարանային ինտերիերի դիզայնին առնչվող միջազգային և տեղական պատմատեսական նյութեր, հոդվածներ և հրապարակումներ (Գիբս Բ., Հարությունյան Մ., Տիգրանյան Է., Darragh J., Bogle E.): Հարկավոր է նշել, որ աշխատությունը շարադրելիս բացի նշված գրականությունից օգտագործվել են թանգարանների արխիվային նյութեր, ինչպես նաև տեղում կատարվել է հետազոտություն:

Ատենախոսության կառուցվածքը և հակիրճ բովանդակությունը:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից, հավելվածից և վերատպություններից:

Ներածությունում ներկայացված են ատենախոսության հիմնական նպատակներն ու խնդիրները, աշխատանքի իրականացման տեսական և մեթոդաբանական հիմքը, թեմայի կարևորությունն ու արդիականությունը, գիտական նորույթը, գործնական նշանակությունը, սկզբնաղբյուրների ու գրականության հակիրճ տեսությունը:

«Պատմատեսական ակնարկ, բնագավառի միջազգային փորձը և ուսումնասիրության ենթակա օբյեկտների ընտրությունը» վերնագիրը կրող առաջին գլխում ուսումնասիրվել են թանգարանային պատմության տեսական վկայությունները, թանգարանային ինտերիերի դիզայնի հիմնական առանձնահատկությունները, նախագծման փուլերը, ինչպես նաև կատարվել է Երևանի թանգարանների պրոֆիլային դասակարգման ցուցակագրումը:

«Երևանի խորհրդային ժամանակաշրջանի թանգարանների ինտերիերի դիզայնը» վերնագիրը կրող երկրորդ գլխում ուսումնասիրվել են խորհրդային շրջանում հիմնադրված թանգարանների տիպաբանական և ոճային առանձնահատկությունները, առանձնակի վերլուծության են ենթարկվել Հայաստանի ազգային պատկերասրահի, Հայաստանի պատմության թանգարանի, Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի, Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի, Հովհաննես Թումանյանի սոցիո-թանգարանի, ՀՀ ՊՆ «Մայր Հայաստան» զինվորական թանգարանի, Հայաստանի փայտարվեստի թանգարանի ինտերիերները, ինչպես նաև ներկայացվել են դրանց միջազգային զուգահեռները:

«Երևանի հետխորհրդային ժամանակաշրջանի թանգարանների ինտերիերի դիզայնը» վերնագիրը կրող երրորդ գլխում ուսումնասիրվել են հետխորհրդային շրջանում հիմնադրված թանգարանների տիպաբանական և ոճային առանձնահատկությունները, առանձնակի վերլուծության են ենթարկվել Ալեքսանդր Թամանյանի անվան ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտի, Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի, Հայաստանի բնության պետական թանգարանի, Գաֆեսեան արվեստի կենտրոնի, Կալենց թանգարանի, Կոմիտասի թանգարան-ինստիտուտի ինտերիերները, ինչպես նաև ներկայացվել են դրանց միջազգային զուգահեռները:

Գլուխ առաջին. «Պատմատեսական ակնարկ, բնագավառի միջազգային փորձը և ուսումնասիրության ենթակա օբյեկտների ընտրությունը». ներկայացվել է թանգարանների ինտերիերի դիզայնի դերն ու նշանակությունը, բերվել են թանգարանների ծագման վաղ օրինակների պատմատեսական նկարագրերը, կատարվել է թանգարանների դասակարգումը ըստ պրոֆիլների և դրանց առանձնահատկությունների բնորոշումը: Առաջին գլուխը բաղկացած է տաս ներթափանցներից:

Առաջին ենթագլխում՝ «Պատմական ակնարկ» վերնագրով դիտարկվում է թանգարանների ծագման ու զարգացման պատմությունը, ինչպես նաև քննարկվում են թանգարանային ինտերիերի դիզայնի դերն ու նշանակությունը: Թանգարանները, կախված ցուցադրված հավաքածուներից, կրում են որոշ առանձնահատկություններ, որոնք դրսևորվում են թե՛ ցուցանմուշների պահպանման, և թե՛ մատուցվող նյութի միջավայրի կազմակերպման գործում: Համաշխարհային պատմությունը վկայում է, որ ի սկզբանե թանգարանները, որպես հասարակական մշակութային վայրեր ձևավորված չէին եղել: Դրանք, տարեցտարի զարգացան՝ համակարգելով թե՛ այցելուների հոսքի կառավարումը, թե՛ ցուցադրության կազմակերպումը, և թե՛ ցուցանմուշների անվտանգ պահպանումը:

Երկրորդ ենթագլխում՝ «Թանգարանների ծագման ու զարգացումը» վերնագրով դիտարկվել են թանգարանների ամենավաղ օրինակները: Թանգարանների առաջին օրինակներն ի հայտ են եկել մարդկության զարգացման այն փուլում, երբ առարկաների բնատիպերը սկսվել են պահպանվել ոչ թե որպես կիրառական-տնտեսական արժեքներ, այլ որպես վավերական, գեղագիտական վկայություններ: Հայ իրականությունում թանգարանների ամենավաղ օրինակներն ի հայտ են եկել մ.թ.ա. IX–VI-րդ դարերում, զարգանալով, հասնելով մինչև XIX-րդ դար:

Երրորդ ենթագլխում՝ «Թանգարանների դասակարգումը» վերնագրով ներկայացվել է թանգարանների պրոֆիլային դասակարգումը, ինչպես նաև դիտարկվել են պրոֆիլային առանձնահատկությունների անմիջական դրսևորումները ինտերիերի դիզայնում:

Չորրորդ ենթագլխում՝ «Թանգարանների հատակազծային հիմնախնդիրները» վերնագրով դիտարկվել են ներքին և արտաքին միջավայրի նախագծման դրույթները. տեղակայումը քաղաքային միջավայրում, դիրքը, հասանելիությունը:

Հինգերորդ ենթագլխում՝ «Թանգարանային ինտերիերի դիզայնի առանձնահատկությունները» վերնագրով քննարկվել են դիզայն հորինվածքի բովանդակային միասնականության և ներդաշնակության հարցերը: Թանգարանային ինտերիերի դիզայնը համակարգային գործընթաց է, որն իր մեջ ամփոփում է մի շարք գործառույթներ՝ կախված պրոֆիլային առանձնահատկություններից, տիպային պատկանելությունից և նշանակությունից: Թանգարանային միջավայրը կարևոր դեր է խաղում ցուցանմուշները ընկալելու, այցելուների հետաքրքրասիրությունը բավարարելու, այցելությունների արդյունավետությունը խթանելու գործում:

Վեցերորդ ենթագլխում՝ «Ինտերիերի դիզայնի նախագծային գործընթացի կազմակերպումն ու կառավարումը» վերնագրով դիտարկվել են ինտերիերի կազմակերպման գործընթացի հիմնադրույթները: Թանգարանային միջավայր նախագծելիս կարևորվում են հոգեբանության մի շարք գործոններ, որոնք թելադրում են այցելուների ներգրավվածությունն ու վարվելակերպը:

Յոթերորդ ենթագլխում՝ «Թանգարանների ինտերիերի դիզայնը ըստ պրոֆիլների» վերնագրով ներկայացվել է պրոֆիլային առանձնահատկությունների անդրադարձը ինտերիերի դիզայնի վրա: Թանգարանները լինում են գեղարվեստական, պատմական, բնագիտական, տեխնիկական, հուշային, ճարտարապետական և կոմպլեքսային: *Գեղարվեստական* թանգարաններում թեմատիկ հավաքածուներով ամփոփված են գեղարվեստական աշխատանքներ: Այստեղ կարևորվում են նմուշների ջերմալուսային անվտանգությունը, ուղղորդված լուսավորությունը, հետազոտական միջավայրի ապահովումը, գունային ընդհանրական լուծումների համադրումը, որը չի խանգարի յուրաքանչյուր աշխատանքի գույների ճիշտ ընկալմանը: *Պատմական* թանգարաններում ցուցադրվում են որևէ դարաշրջանին կամ երևույթին առնչվող պատմամշակութային

արժեք ունեցող նմուշներ: Այստեղ կարևորվում է իրերի պահպանման համար ջերմախոնավային պայմանների ապահովումը և գունալուսային շահեկան լուծումների ընտրությունը: *Բնագիրական* թանգարաններում ցուցադրվում և պահպանվում են բուսական, կենդանական, կենսաբանական արժեք ներկայացնող նմուշներ: Այսպիսի թանգարաններում ինտերիերի դիզայնը պետք է կազմակերպվի այնպես, որ ապահովի յուրաքանչյուր ցուցանմուշի անհատական ջերմալուսային պահանջները, ընդհանուր միջավայրի ներդաշնակությունը չաղճատելով: *Տեխնիկական* թանգարաններում ցուցադրվում են տեխնիկայի տարբեր միջոցներ: Այստեղ կարևորվում է հատկապես մարդու և ցուցանմուշի միջև անհատական շփման հնարավորությունը, որով առավել անմիջական փոխհարաբերություն է ստեղծվում: *Հուշային* թանգարաններում առանցքային խնդիրը որևէ հայտնի գործչի կենդանության շունչը պահպանելն ու հաղորդելն է: Այստեղ ինտերիերի դիզայնը գրեթե փոփոխության չի ենթարկվում: *Ճարտարապետական* թանգարաններում հիմնականում ցուցանմուշների տեսքով ներկայացվում են պլանային գծագրեր, ճակատային հորինվածքներ և մանրակերտեր: *Կոնսվերվացիային* թանգարաններում համակարգվում են տարաբնույթ նմուշներ: Այստեղ հիմնականում ինտերիերի լուծումների միջոցով է թելադրվում մեկ միջավայրից մյուսին ասիուն անցումը, որով և թելադրվում են բովանդակային տարբերությունները:

Ութերորդ ենթազխում «Թանգարանների միջազգային կարևորագույն օրինակներն ու զուգահեռները» վերնագրով ներկայացվել են ինտերիերի դիզայնի լավագույն լուծումներ ունեցող թանգարանների օրինակները, ցուցակագրական կերպով ներկայացվել է նաև դրանց տարեկան այցելությունների թիվը, մակերեսը, ցուցանմուշների քանակը և տեղակայումը: Այդ թանգարանների շարքում են Լուվրը, Բրիտանական թանգարանը, Օրսեյի թանգարանը, Պոմպիդու կենտրոնը և այլն:

Իններորդ ենթազխում «Թանգարանների ինտերիերի նախագծման փուլերը» վերնագրով ներկայացվել է ինտերիերի դիզայնի կազմակերպման փուլերի հաջորդականությունը: Վերոիշյալ փուլերն իրենցից ենթադրում են հատակագծի բաժանումը և կազմակերպումը ըստ մուտքի, նախասրահի, տեղակատվական սրահի, աշխատասենյակների, արխիվի, ցուցասրահների, դափիճի, գրադարանի և հարակից այլ գոտիների: Թանգարաններում մեծ կարևորություն ունի նաև տարածքի ոճավորումը, լուսավորությանը, էրգոնոմիկ, գունային, տեքստուրալ համադրությունները, կահավորումը և այլն: Լուսավորությունը թանգարաններում հիմնականում իրականանում է արհեստական, ուղղորդված տարբերով և ըստ պրոֆիլի ունենում է իր առանձնահատկությունները: Կահավորումը կազմակերպվում է ըստ ցուցանմուշների տեսակի, հաշվի առնելով էրգոնոմիկ նկատառումները և ոճային հորինվածքը: Թանգարանային ինտերիերի դիզայնի անբաժանելի մասն է կազմում տեսողական հաղորդակցությունը, որի միջոցով կատարվում է այցելուների ուղղորդումը և ճանաչողությունը:

Տասներորդ ենթազխում «Պատմական ակնարկ հայկական թանգարաններից» վերնագրով դիտարկվել են հայկական թանգարանների ստեղծման առաջին օրինակները, բերվել է ներկայումս գործող երևանյան թանգարանների պրոֆիլային դասակարգումը: Հայաստանի տարածքում թանգարանների նախատիպեր կային դեռևս մ.թ.ա. IX-VI-րդ դարերում: «Լուվրյան աղյուսակում» նկարագրվող Մուծաճիրի արքայական և տաճարային գանձատուն-թանգարաններում իրերը պահպանվում էին ըստ պատրաստման նյութի և ներկայացված էին համապատասխան ցուցադրությամբ: Թանգարաններ կան Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում, սակայն դրանց մեծ մասը տեղակայված է Երևանում: Այստեղ ներկայումս գործում է 42 թանգարան: Դրանք ըստ պրոֆիլների դասակարգվում են հետևյալ կերպ.

Գեղարվեստական		
Հայաստանի ազգային պատկերասրահ	1921թ.	12
Ռուսական արվեստի թանգարան	1936թ.	
Մ. Սարյանի տուն-թանգարան	1967թ.	
Հ. Կոջոյանի և Ա. Սարգսյանի տուն-թանգարան	1973թ.	
Գևորգ Գրիգորյանի (Ջոտտո) արվեստանոց-թանգարան	1977թ.	
Հայաստանի փայտարվեստի թանգարան	1977թ.	
Ժամանակակից արվեստի թանգարան	1972թ.	
Երվանդ Քոչարի թանգարան	1984թ.	
«Էդուարդ Իսաբեկյան» ցուցասրահ	2004թ.	
Գաֆեսճեան արվեստի կենտրոն	2009թ.	
Կալենց թանգարան	2010թ.	
Հովհաննես Շարամբեյանի անվան ժողովրդական ստեղծագործության կենտրոն	1930-2011թ.	
ՊԱՏՄԱԿԱՆ		
Հայաստանի պատմության թանգարան	1921թ.	10
Մեքսիկոյ Մաշտոցի անվան Մատենադարան	1921թ.	
Հայաստանի պետական մանկավարժական համալսարանի պատմության թանգարան	1922թ.	
Երևանի պատմության թանգարան	1931թ.	
«Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարան	1968թ.	
ՀՀՊՆ «Մայր Հայաստան» զինվորական թանգարան	1970թ.	
«Զորավար Անդրանիկ» թանգարան	1995թ.	
Հայոց գեղասպանության թանգարան-ինստիտուտ	1995թ.	
Հայ Յեղափոխական Դաշնակցության պատմության թանգարան	2007թ.	
Արարատ կոնյակի գործարանի թանգարան	1887թ.	
ԲՆԱԳԻՏԱԿԱՆ		
Հ. Կարապետյանի անվան երկրաբանական թանգարան	1937թ.	2
Հայաստանի բնության պետական թանգարան	2000թ.	
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ		
Հայաստանի երկաթուղու թանգարան	2009թ.	3
Կապի թանգարան	2012թ.	
Տիեզերքի թանգարան	2001թ.	
ՀՈՒՇԱՅԻՆ		
Խ. Աբովյանի տուն-թանգարան	1938թ.	13
Հովհ. Թումանյանի տուն-թանգարան	1953թ.	
Ավ. Իսահակյանի տուն-թանգարան	1963թ.	
Ալ. Սպենդիարյանի տուն-թանգարան	1963թ.	
Ե. Չարենցի տուն-թանգարան	1964թ.	
Դ. Դեմիրճյանի տուն-թանգարան	1977թ.	
Ա. Խաչատրյանի տուն-թանգարան	1978թ.	
Կոմիտասի թանգարան-ինստիտուտ	2015թ.	
Ս. Կապուտիկյանի տուն-թանգարան	2003թ.	
Կ. Դեմիրճյանի թանգարան	2001թ.	
Շառլ Ազնավուրի տուն-թանգարան	2011թ.	
Ֆրիտյոֆ Նանսենի թանգարան	2014թ.	

ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ		
Ալեքսանդր Թամանյանի ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտ	1990թ. 2016թ.	1
ԿՈՄՊԼԵՔՍԱՅԻՆ		
Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան	1921թ.	1

Գուլյա երկրորդ. «Երևանի խորհրդային ժամանակաշրջանի թանգարանների ինտերիերի դիզայնը». ուսումնասիրվել են Երևանում խորհրդային ժամանակաշրջանում հիմնադրված 25 թանգարանները, ներկայացվել են դրանց դիզայներական առանձնահատկությունները: Հանգամանալի վերլուծության են ենթարկվել խորհրդային շրջանում հիմնադրված թանգարանների տիպաբանական և ռճային առանձնահատկությունները, առանձնակի հետազոտության են ենթարկվել Հայաստանի ազգային պատկերասրահի, Հայաստանի պատմության թանգարանի, Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի, Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի, Հովհաննես Թումանյանի տուն-թանգարանի, ՀՀ ՊՆ «Մայր Հայաստան» զինվորական թանգարանի, Հայաստանի փայտարվեստի թանգարանի ինտերիերները, ներկայացվել են դրանց միջազգային զուգահեռները և արդիականացման հնարավորությունները:

Առաջին ենթազխում «Երևանի խորհրդային ժամանակաշրջանի թանգարանների ցուցակագրումը ըստ պրոֆիլների և դրանց ինտերիերի դիզայնը» վերնագրով ցուցակագրվել են Երևանում խորհրդային տարիներին հիմնադրված թանգարանները: Ներկայացվել են նաև վերջին տարիներին հիմնանորոգված թանգարանները (Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, Խաչատուր Աբովյանի տուն-թանգարան, Ալեքսանդր Սպենդիարյանի տուն-թանգարան, Մարտիրոս Սարյանի տուն-թանգարան, Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանը):

Երկրորդ ենթազխում «Հայաստանի ազգային պատկերասրահ» վերնագրով ուսումնասիրվել է պատկերասրահի ինտերիերի դիզայնը, քննարկվել են գոտևորման, հորինվածքային, ռճային, լուսավորության, կահավորման, տեսողական հաղորդակցության հիմնահարցերը, զուգահեռներ են անցկացվել միջազգային նույնօրինակ թանգարանների հետ: Հայաստանի ազգային պատկերասրահի յուրաքանչյուր սրահում զետեղված են միևնույն ոճին կամ ժամանակաշրջանին պատկանող արվեստի գործեր: Այստեղ հատակագծային լուծումներում խոչընդոտ են հանդիսանում սրահների միջև նեղ անցուղիները, որոնք հաճախ խցանումների պատճառ են դառնում: Այս նույն խնդիրն ի հայտ է գալիս նաև նեղ աստիճանահարթակներում, որոնց խաչվող հորինվածքը խաթարում է մարդկային հոսքի դյուրին տեղաշարժը: Հայաստանի ազգային պատկերասրահը և Հայաստանի պատմության թանգարանը գտնվում են միևնույն կառույցի ներսում, ունեն ընդհանուր մուտք, դա է պատճառը, որ մարդկային հոսքի ճիշտ ուղղորդման համար արդեն իսկ պարտադիր է ունենալ տեսողական հաղորդակցության այնպիսի լուծումներ, որոնք ի սկզբանե կհուշեն, թե որ թանգարանը, որտեղ է գտնվում: Պատկերասրահի ինտերիերում գերակշռում են պաստելային երանգները, որոնք հիմնականում արտահայտված են սպիտակ, դարչնագույն, երկնագույն, մանուշակագույն համադրություններով: Դրանք համադրվում են առաստաղի ճերմակ մակերեսին և ամբողջացվում մանրահատակի փայտի գունեղանգով: Ազգային պատկերասրահում շատ են պատուհանները, որոնք մինչ օրս վարագույների սովոր շերտով են սքողված: Հայտնի է, որ բնական լույսը գեղանկարչական աշխատանքների համար մեծ վտանգ է ներկայացնում: Բնական լուսավորությունը համայրում են առաստաղին փակցված ցերեկային լուսատուները: Զուգահեռներ անցկացնելով ժամանակի լավագույն նույնապրոֆիլ թանգարանների միջև, որպես

լավագույն օրինակներ կարելի է նշել Լուվրը, Էրմիտաժը և Սալամոն Գուգենհայմի թանգարանները: Դիտարկելով համաշխարհային փորձը և ինտերիերի դիզայնի առանձնահատկությունները կարելի է հանգել եզրակացության, որ Հայաստանի ազգային պատկերասրահը եզակի է իր ցուցանմուշների նշանակությամբ և հարստությամբ, սակայն դրանց գրագետ մատուցման համար ունի արդիականացման կարիք: Ֆունկցիոնալ նպատակահարմարության առումով հարկ է վերանայել մարդկային շարժման գրաֆիկների, ցուցադրվող նյութերի ներկայացման, լուսավորության, անվտանգության համակարգերը, ինչպես նաև հատակազծային բարդ հորինվածքը:

Երրորդ ենթագլխում «Մետրոպ Մաշտոցի անվան Մատենադարան» վերնագրով ուսումնասիրվել է Մատենադարանի ինտերիերի դիզայնը, քննարկվել են գոտևորման, հորինվածքային, ոճային, լուսավորության, կահավորման, տեսողական հաղորդակցության հիմնահարցերը, զուգահեռներ են անգնազվել միջազգային նույնօրինակ թանգարանների հետ: Նեոհավական ոճով կառուցված Մատենադարանի շենքի մոնումենտալ աստիճանների տանում են դեպի Մետրոպ Մաշտոցի և Կորյունի՝ Ղուկաս Չուբարյանի կողմից կետած արձանները: Շենքի ճակատները գառառված են օանդակներով և խաչքարերով: Մատենադարանի հին շենքը և նորակառուց համալիրը կառուցված են բազալտից, որն արտահայտվում է նաև ինտերիերում՝ համադրվելով այլ քարերի հետ: Այստեղ գերակշռում են սպիտակուց դեպի շագանակագույն անցումային երանգները, այդ իսկ պատճառով ընդհանուր միջավայրը միապարզ է նայվում: Ցուցասրահներում առկա են թվային էկրաններ, որոնք իրենց խոշոր սև ծավալներով չեն ինտեգրվում ընդհանուր դասական միջավայրին: Այստեղ նվազագույնի է հասցված բնական լուսավորությունը: Առկա լուսամուտները ներսից երբեմն փակվում են շերտավարագույրներով: Առաստաղին ամրացված ճենապակե ջահերին լրացնելու են գալիս ցուցափեղկերի ներսում առկա ուղղորդված լուսատուները: Այստեղ ձեռագրերի ներկայացումն իրականացվում է դասական ոճով նախազգծված ցուցափեղկերի միջոցով: Դրանք ցուցանմուշների բնույթից կախված ունեն ուղղաձիգ և հորիզոնական կառուցվածք: Թեև ցուցափեղկերի նախազգծումն իրականացված է հենց հին ձեռագրերի ներկայացման համար, բայց դրանցում չի լուծված ջերմախոնավային համակարգերի ներկառուցման հարցը: Այդ իսկ պատճառով դրանք կարող են վտանգի ենթարկել հին նմուշները: Միջազգային զուգահեռներ անցկացնելով կարելի է դիտարկել մեծ ճանաչում գտած թանգարանները և ձեռագրատները, որոնցից առանձնանում Բլեքբրնի թանգարան-պատկերասրահը, Բրիտանական գրադարանը, Վիկտորիա և Ալբերտ թանգարանը: Դիտարկելով համաշխարհային փորձը և ինտերիերի դիզայնի առանձնահատկությունները կարելի է հանգել եզրակացության, որ թեև Մատենադարանը վերջերս է վերանորոգվել, և հագեցվել է ժամանակակից տեխնոլոգիական սարքավորումներով, սակայն ցուցասրահներն, այնուամենայնիվ, ունեն արդիականացման կարիք, որի արդյունքում առավել նպատակահարմար կերպով կմշակվեն կոմպոզիցիոն հորինվածքը, զուսալուսային և կահավորման համակարգերը:

Չորրորդ ենթագլխում «Հայաստանի փայտարվեստի թանգարան» վերնագրով ուսումնասիրվել է թանգարանի ինտերիերի դիզայնը, քննարկվել են գոտևորման, հորինվածքային, ոճային, լուսավորության, կահավորման, տեսողական հաղորդակցության հիմնահարցերը, զուգահեռներ են անցկացվել միջազգային նույնօրինակ թանգարանների հետ: Փայտարվեստի թանգարանը բաժանված է երկու միմյանց հետ կապ ունեցող հարկաբաժինների: Այստեղ ողջ ինտերիերի դիզայնը բնական նյութերով է կազմակերպված. փայտե ցուցափեղկերին, համադրվելու են գալիս փայտե բազրեձողերը, ինչպես նաև մետաղական տարրերը,

պատերի ու հատակի քարե լուծումները: Թանգարանում լուսավորությունն իրականանում է ինչպես բնական, այնպես էլ արհեստական եղանակով: Փայտե կարկասային ուղղորդված լուսավորության համակարգը և կետային լուսատուները փակցված են ինչպես պատերին, այնպես էլ փակ ցուցափեղկերին: Թանգարանի ցուցափեղկերը փայտե, ապակեպատ վերնամասով պատվանդանների տեսք ունեն: Միջազգային նույնանման թանգարաններից աչքի է ընկնում Ֆիլադելֆիայի փայտարվեստի կենտրոնը, որտեղ ներկայացվում են ինչպես մշտական, այնպես էլ ժամանակավոր ցուցադրություններ: Հայաստանի փայտարվեստի թանգարանի ինտերիերի այսպիսի միապաղաղությունը որոշ չափով խթանում է թանգարանի գրավչությունը: Ուստի կարելի է ասել, որ որքան էլ հաճելի է բնական նյութերով հագեցած միջավայրը, բայց այստեղ կոնտրաստներ ստեղծելու մեծ անհարժեշտություն կա, որը կառանձնացնի ինչպես ցուցանմուշները, այնպես էլ կստեղծի որոշակի ռիթմ:

Հինգերորդ ենթագլխում «Հայաստանի պատմության թանգարան» վերնագրով ուսումնասիրվել է թանգարանի ինտերիերի դիզայնը, քննարկվել են գոտևորման, հորինվածքային, ոճային, լուսավորության, կահավորման, տեսողական հարողդակցության հիմնահարցերը, զուգահեռներ են անցկացվել միջազգային նույնօրինակ թանգարանների հետ: Թանգարանում ցուցադրական միտքը բացահայտվում է ուղղորդված հերթականությամբ, այսինքն՝ նախասրահից ձախ մտնելով, ցուցասրահներում միշտ գործում է ձախակողմյան ուղղվածությունը: Երկրորդ հարկում ցուցադրության համար նախատեսված տարածքն ավելի փոքր է, սակայն միևնույն ժամանակ խիստ հավասարակշռված է: Թանգարանի յուրաքանչյուր ցուցանմուշ ունի իր տակագիրն ու բացատրությունը, որոնք ամբողջապես ինտեգրվում են ինտերիերի դիզայնին: Ցուցափեղկերում էրգոնոմիկ նկատառումներից ելնելով առարկաները տեղադրված են տարամասշտաբ պատվանդանների վրա: Ինտերիերում գերակշռում են կապտագորշ երանգները, որոնցում սպիտակ հիմքերի վրա ուղղորդված լուսավորությամբ առանձնանում են ցուցանմուշները: Մյուս սրահներում գունային գամման ավելի ակտիվ է՝ պայմանավորված ցուցադրվող նմուշների գույներով: Որպես միջազգային նմանօրինակ թանգարանի, զուգահեռներ են անցկացվել Հունաստանում 2009թ.-ին բացված Ակրոպոլիս թանգարանի հետ: Վերոհիշյալ ուսումնասիրությունը թույլ է տալիս հանգել եզրակացության, որ Հայաստանի պատմության թանգարանի ինտերիերի դիզայնը բավականին գրագետ է կազմակերպված: Այստեղ նկատվում են ռացիոնալիստական ոճի դրսևորումները: Որոշ սրահներում, այնուամենայնիվ, վերանորոգման կարիք է զգացվում:

Վեցերորդ ենթագլխում «Հովհաննես Թումանյանի թանգարան» վերնագրով ուսումնասիրվել է թանգարանի ինտերիերի դիզայնը, քննարկվել են գոտևորման, հորինվածքային, ոճային, լուսավորության, կահավորման, տեսողական հարողդակցության հիմնահարցերը, զուգահեռներ են անցկացվել միջազգային նույնօրինակ թանգարանների հետ: Թանգարանի հորինվածքում ամփոփված են գրողի տունը վերարտադրող ինտերիերները, ցուցասրահները, գրադարանը և դահլիճը: Այստեղ ցուցափեղկերը միմյանց նկատմամբ ունեն կանոնավոր տեղակայում, և ուղղորդում են այցելուներին ըստ թեմատիկ հաջորդականության: Ընդհանուր միջավայրի կազմակերպումը միապաղաղ է: Հորինվածքում չի շեշտվում դոմինանտն ու երկրորդականը: Ուշագրավ է երկրորդ հարկի հուշային գոտին, որի կազմակերպումը ամբողջապես արթնացնում է հեղինակի կենդանի վերհուշը: Թանգարանում գերիշխում է սպիտակ հարդարանքը, որը համադրվում է հատակի շագանակագույն փայլուն մակերեսին: Այստեղ լուսավորությունն իրականացվում է բնական և արհեստական եղանակով: Ցուցանմուշները շեշտվում են ցուցափեղկերի

ներսում առկա լուսատուների միջոցով: Որպես միջազգային նույնօրինակ թանգարանի զուգահեռներ են անցկացվել Մարկ Տվենի տուն-թանգարանի հետ: Ամփոփելով կարելի է ասել, որ Հովհաննես Թումանյանի թանգարանն ունի շատ լավ ճարտարապետական հորինվածք, որի հիման վրա կարելի է ստեղծել միասնական գրազետ ինտերիեր: Թեպետ թանգարանի հատակածային լուծումները բավականին շահեկան են, սակայն հիմնանորոգումների բացակայության պատճառով այստեղ լուսավորության, կահավորման, գունային և էրգոնոմիկ լուծումներն ունեն արդիականացման կարիք: Հաշվի առնելով, որ թանգարանն ունի տարբեր գոտիներ, հարկաբաժիններ և ինտերակտիվ ցուցադրություն, կարելի է ընդհանուր հորինվածքի ոճին համապատասխան մշակել նաև կողմնորոշիչ նշաններ:

Յոթերորդ ենթազվյալում՝ «ՀՀ ՊՆ Մայր Հայաստան զինվորական թանգարան» վերնագրով ուսումնասիրվել է թանգարանի ինտերիերի դիզայնը, քննարկվել են գոտևորման, հորինվածքային, ոճային, լուսավորության, կահավորման, տեսողական հաղորդակցության հիմնահարցերը, զուգահեռներ են անցկացվել միջազգային նույնօրինակ թանգարանների հետ: Թանգարանի ցուցադրությունը սկսվում է էքստերիերից, ուր ցուցադրված են մի շարք խոշոր զինատեսակներ, որոնցից վերաստիճանահարթակի վրա բացվում է թանգարան տանող երկփեղկ դուռը: Թանգարանի առաջին սրահի կոմպոզիցիոն կենտրոնը կառույցի երեք հարկերը միմյանց կապող շրջանաձև խորշն է: Այստեղ գեղիշխում է կարմիր տուֆի հարդարանքը, որին համադրվելու է գալիս մարմարե հատակը: Հորինվածքին համեմատական թեթևություն են հաղորդում սպիտակ պատերն ու մեծ ցուցափեղկերը: Բրոնզաձուլյ լուսավորության համակարգերն ու բազրեձողերը նախազգծված են ըստ թանգարանի բովանդակության: Այստեղ լուսավորությունը հիմնականում կատարվում է արհեստական եղանակով: Այն տարբերվում է միայն Հուլ-դահլիճում, որտեղ շատ թույլ է, ուղղորդված և կախարդական տպավորություն է թողնում: Միջազգային նույնապրոֆիլ թանգարաններից դիզայներական լուծումներով հատկապես աչքի են ընկնում Բաստոնի պատերազմի թանգարանը Բելգիայում և Կայսերական ռազմական թանգարանը Լոնդոնում: Ուսումնասիրության արդյունքում պարզ է դառնում, որ թեև ՀՀ ՊՆ Մայր Հայաստան թանգարանը ունի հարուստ ցուցադրություն և գերազանց ճարտարապետական հորինվածք, որն այնուամենայնիվ, արդիականացման կարիք ունի:

